

Գեղարքունիքի մարզպետը ծանոթացել է Սևան քաղաքում ընթացող բարեկարգման աշխատանքներին

04.09.2017

Սեպտեմբերի 4-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային շրջայց է կատարել Սևան համայնքնում, որի ընթացքում Սևանի քաղաքապետ Սարգիս Մուրադյանի ուղեկցությամբ ծանոթացել է քաղաքում ընթացող ասֆալտապատման աշխատանքներին: Մարզպետը մասնավորապես եղել է Սևանի Աբովյան, Սևանեցու փողոցներում, ինչպես նաև այցելել է համայնքի ջանքերով հիմնանորոգված բազմաբնակարան շենքերի բակային տարածքներ:

Շրջայցի ընթացքում Սևան համայնքի ղեկավարը մարզպետին ներկայացրել է նաև տեղեկատվություն՝ քաղաքի մնացած տարածքներում բարեկարգման ենթակա աշխատանքների նախապատրաստման մասին, զուգահեռաբար քննարկվել է դրանց իրականացման վերաբերյալ ֆինանսական լրացուցիչ աղբյուրների ստեղծման հնարավորությունները:

Այցի ավարտին մարզպետ Կարեն Բոթոյանն իր գոհունակությունն է հայտնել Սևան քաղաքում իրականացվող աշխատանքների վերաբերյալ, և նշել, որ մարզի արագ զարգացումն ապահովելու կարևոր նախապայմաններից մեկն էլ համայնքների ղեկավարների կողմից աշխատանքի հանդեպ ցուցաբերած պատասխանատվությունն ու հետևողականությունն է, որը կարելի է տեսնել Սևան քաղաքում: